ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Studies in the Visual Cultures of the Middle Ages

Vigilant Powers: Three Churches of Early Medieval Armenia

Christina Maranci

BREPOLS

ԱՐԹՈՒՆ ՀՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀՈՒԱՐԹՈՒՆՔ). ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻ

ՔՐԻՍՏԻՆԱ ՄԱՐԱՆՑԻ

Studies in the Visual Cultures of the Middle Ages, vol. 8, Brepols, Turnhout 2015

Քրիստինա Մարանցու այս ծավալուն աշխատությունը նվիրված է յոթերորդ դարի հայկական երեք նշանավոր կաթողիկե մայր եկեղեցիների՝ Մրենի, Զվարթնոցի եւ Պտղնու ուսումնասիրությանը: Հայկական ճարտարապետության պատմության ավելի քան հարյուրամյա գիտական ժառանգության մեջ այս աշխատանքն այն եզակի ուսումնասիրություններից է, որ նոր, համակարգված եւ միջոլորտային մոտեցում է ցուցաբերում քաջածանոթ նյութին եւ առաջադրում է նոր խնդիրներ: Կարելի է ասել, որ այստեղ առաջին անգամ փորձ է արվել, առնվազն անգլախոս ընթերցողների համար, վաղմիջնադարյան «ոսկեդարյան» շրջանի այս երեք եկեղեցիները ներկայացնել ոչ միայն ճարտարապետական, տիպաբանական, կառուցողական կամ գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծությամբ եւ դասակարգմամբ, այլեւ դիտարկել այդ վերլուծությունը պատմական, գաղափարական, ծիսաբանական ընդհանուր համատեքստում, *տեսնել* դրանք մի միասնական շղթայի մեջ:

Այդ համատեքստը յոթերորդ դարի աշխարհաքաղաքական փոփոխություններն են, Սուրբ Երկրի դրամատիկ իրադարձությունները եւ դրանց հետ կապված՝ Հայաստանի քաղաքական, հասարակական եւ դավանական իրողությունները: Իսկ շղթան՝ կայսերական, եկեղեցական եւ նախարարական իշխանության թողած դրոշմը՝ երեք հուշարձանների ճարտարապետական հորինվածքի, քանդակային հարդարանքի եւ վիմագրական բովանդակության վրա:

Հեղինակը հատկապես շեշտում է այն փաստը, որ այս երեք եկեղեցիները կառուցվել են «գլոբալ» պատերազմների տարիներին, երբ մի կողմից՝ Հայաստանի «ռազմական սահման» լինելու կարգավիճակը, մյուս կողմից՝ ժամանակակիցների վախճանաբանական սպասելիքների ուժգնացումը, ձեւավորել են մի բաբախուն գեղարվեստական մշակույթ, որ աղերսվում է միաժամանակ բյուզանդական, պարսկական եւ արաբական աշխարհներին: Ըստ Մարանցու՝ յոթերորդ դարի հայկական հուշարձանների աննախադեպ քանակը եւ տիպաբանական բազմազանությունը թույլ են տալիս ենթադրել, որ «սահմանային» դրությունը կարող է արտոնյալ տարածք հանդիսանալ՝ մշակույթի եւ արվեստի զարգացման համար: Ըստ այդմ՝ հեղինակի գլխավոր հարցադրումներն են, թե ինչպե՞ս, ի՞նչ կերպով են այս հուշարձաններն արտահայտում այն աշխարհը, որի մեջ ստեղծվել են, եւ ինչպե՞ս են դրանք «գործել» այդ աշխարհում:

Միջմշակութային առնչությունների եւ համատեքստայնացված հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաեւ տարածաշրջանային գեղարվեստական ավանդույթների ընդհանրության ընկալումը թույլ են տվել հեղինակին յուրաքանչյուր դեպքում վերանայել հուշարձանի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները, ընդունել կամ հերքել տարբեր վարկածները, ինչպես նաեւ առաջադրել մի շարք բացահայտումներ եւ նորովի մեկնաբանություններ, առաջ քաշել նոր, չլուսաբանված խնդիրներ: Դրանցից են, օրինակ՝ ղատվիրատուների շրջանակի եւ հասարակական ղատմության, գաղափարախոսության կազմավորման, ընկալման տեսությունների, փոխանակման եւ յուրացման հղացքների հարցերը, կամ՝ մեկ հուշարձանում կամ ղատկերում ամփոփված մի քանի իմաստների եւ միտումների ընթերցման հնարավորությունը, սրբազան տարածքների ձեւավորումը եւ եկեղեցիների տեղադրությունը բնաղատկերում, կառուցվող կամ վերակառուցվող եկեղեցիներում նախկին քանդակազարդ հուշարձանների բեկորների գործածումը, որ բարձրացնում են մշակութային հիշողության հարցը, եւ այլն: Ոչ ղակաս կարեւոր է նաեւ Մարանցու ձգտումը՝ զգալ եւ փոխանցել հայկական միջնադարյան եկեղեցիների շարժուն միջավայրն ու կենդանի շունչը, որ օծված էր մեռոնով, ղարուրված էր խնկարկման բույրով, թրթռում էր ծիսական մեղեդիների եւ արարողական երթերի շրշյունի ձայներից: Ինչպես ինքն է նշում՝ «*Մոտիկից հայացքը կազմում է այս գրքի սիրտը, եւ հույս ունեմ՝ նաեւ ընթերցման հաճույքը*»[1]:

Յուրաքանչյուր հուշարձանի վերաբերյալ ուսումնասիրված եւ ներկայացված են թե՛ սկզբնաղբյուրների եւ թե՛ մասնագիտական գրականության գրեթե ամբողջական գիտելիքը: Ավելին, մատենագիտության մեջ առատորեն քննարկվում են նաեւ նյութին անուղղակի առնչվող կամ հարակից բնագավառներին ղատկանող աշխատություններ, որոնք օգնել են փաստարկել մի շարք կնճռոտ հարցեր եւ տեղեկություններ:

Երեք եկեղեցիների ընտրությունը ղայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է դարաշրջանի ճարտարաղետական ամենատարածված տիղերից մեկի հարացուցային տարբերակը. Մրենը գմբեթավոր բազիլիկ է, Ձվարթնոցը՝ կենտրոնագմբեթ բոլորակ՝ ներքուստ քառաբսիդ հատակագծով, իսկ Պտղնին գմբեթավոր սրահ է: Բացի այդ, դրանք կաղված են վաղմիջնադարյան Հայաստանի երկու գլխավոր նախարարական տների՝ Կամսարականների եւ Ամատունիների, եւ կաթողիկոս Ներսես Գ Շինողի անվան հետ:

Գիրքն այսպիսով բաժանված է երեք գլխի, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մեկ եկեղեցու համաղարփակ ուսումնասիրությանը:

Առաջին գլուխը վերնագրված է՝ ***Սահմանը.*** *Հերակլը, Հայաստանը եւ Մրենի եկեղեցին*: Ըստ Մարանցու՝ կառուցված լինելով հայ-բյուզանդական սահ-

մանին՝ Մրենի եկեղեցին անմիջականորեն առնչվում է Վերակլի ռազմական արշավանքների քաղաքական համատեքստին, մասնավորապես՝ սահմանի ամրագրման խնդրին: Այս ընկալմամբ է վերլուծված նաեւ եկեղեցու հյուսիսային ճակատը զարդարող քանդակային հորինվածքը, որ պատկերում է գերեվարված Խաչի հաղթական վերադարձը Երուսաղեմ: Տեսարանի բովանդակությունը քննելով գրավոր աղբյուրների, կայսերական գաղափարախոսության եւ ժամանակի վախճանաբանական պատկերացումների հոլովույթում, ինչպես նաեւ հաշվի առնելով եկեղեցու սրբօծման հայկական ծեսի առանձնահատկությունները՝ հեղինակը նորովի է մեկնաբանում քանդակային հորինվածքը որպես Երկնային Երուսաղեմ մուտքի խորհրդանշական դարպաս: Հուշարձանը տեղում ուսումնասիրելու հնարավորությունը Մարանցուն թույլ է տվել մանրազնին հետազոտել նաեւ եկեղեցու ներսում երբեմնի որմնանկարային շարքի մնացորդները եւ հետաքրքիր բացահայտումներ կատարել, ինչպես՝ Քրիստոսի հոտնկայս կերպարը, առաքյալների դիմանկարները, ամենահին հայկական աստվածաշնչյան մեջբերումը եւ այլն: Որմնանկարների պատկերագրական ծրագիրը նույնպես արտահայտել է կայսերական ռազմական հզորության գաղափարը:

Գլխում մանրամասն քննության է առնվում նաեւ արեւմտյան մուտքի բարավորի քանդակային խումբը, որ հանգեցնում է Մրենի անմիջական պատվիրատուի կամ պատվիրատուների ինքնության խնդրի նորովի մեկնաբանությանը, այստեղից էլ՝ շինարարության ավարտի տարեթիվը 638/40-ը համարելու պատեհությանը: Հատկապես համոզիչ է կերպարների դիրքի եւ հագուստների պատկերագրական բազմաշերտ քննությունը: Գլուխն ավարտվում է ենթադրությամբ, որ Մրենի կառուցման պատճառներն ու հանգամանքներն ուղղակիորեն կապված են Վերակլի հայկական արշավանքների հետ: Ինչպես կարծում է Մարանցին՝ «*եկեղեցին արտահայտում է շահերի եւ գաղափարների մի հավաքական ցանց. քաղաքական եւ կրոնական ամրապնդմանն ուղղված կայսերական օրակարգը, տեղական նախարարական տները եւ նրանց՝ իշխանության աստիճանակարգում առաջ գնալու պատեհական հավակնությունները, Սուրբ Երկրի եւ Երուսաղեմի վերաբերյալ ընդհանուր մտահոգությունները եւ Քրիստոսի Երկրորդ Գալստյան սպասումը*»[2]:

Ձվարթնոցին նվիրված գլուխը, որ վերնագրված է ***Միջազգային հարթակ. Ձվարթնոցի տաճարը***, երեքից ամենածավալունն է: Այն նաեւ ներշնչել է գրքի անվանման գաղափարը. «Ճուարթունք՝ Արթուն զորություններ», որով Գրիգոր Լուսավորչի տեսիլքի երկնաբնակ զորքն աղերսվում է դարաշրջանի գերտերությունների եւ վերջիններիս հետ անընդհատ առնչվող հայկական հոգեւոր եւ աշխարհիկ ընտրանու հզորությանը: Գլխում համակարգված հաջորդականությամբ ի մի են բերված մինչ այժմ գոյություն ունեցող բոլոր արժեքավոր ուսումնասիրությունները հայոց ճարտարապետության հազվագյուտ գոհարներից մեկի՝ Ներսես Գ-ի կա-

ռուցած Ձվարթնոց-Սուրբ Գրիգոր եկեղեցու եւ կից պալատական համալիրի մասին: Բացի այդ, քննարկվում են հուշարձանի անվան, հիմնադրման, տեղավայրի ընտրության, ինչպես նաեւ ճարտարապետական հորինվածքի եւ քանդակային հարդարանքի վերաբերյալ տարբեր տեսակետներն ու վարկածները, որոնց հեղինակը հավելում է նորերը: Առաջին հերթին կարեւորվում են տաճարի կառուցման ժամանակը եւ հանգամանքները, որոնց առիթով նա հատկապես շեշտում է Հայաստանում բյուզանդական ռազմական ներկայությունը եւ Ներսես կաթողիկոսի հարաբերությունները մի կողմից Կոստանդ Բ կայսեր, մյուս կողմից՝ հայոց հոգեւոր իշխանության հետ: Այս առումով բավական խորաթափանց դիտարկում է *մոնոթելիստական*, այսինքն՝ «միակամական» զիջումային վարդապետության հիշատակումը, որ որդեգրել էր բյուզանդական արքունիքը՝ սկսած Հերակլից՝ Արեւելյան եկեղեցիների միավորման նպատակով:

Այդ՝ Ձվարթնոցի ճարտարապետական աննախադեպ տիպը վերլուծվում է ասորա-միջագետքյան եւ հատկապես՝ երուսաղեմյան ավանդույթների հետ հարաբերության մեջ: Վերջին պնդումը Մարանցին փաստարկում է նաեւ գրավոր աղբյուրներով (Մովսես Դասխուրանցու *Պատմության* մեջ պահպանված Երուսաղեմի Սուրբ Տեղեաց ուղեցույցի հատվածը)՝ փորձելով պատմականորեն բացատրել Հարության բոլորակի «սրբազան նախատիպի» գործածումը հայկական հողում եւ այդ նախատիպի ստեղծագործական զարգացումը տարբեր օրինակներում: Այս առումով միանգամայն յուրօրինակ եւ ուսանելի է Ձվարթնոցի եւ մահմեդական աշխարհի կարեւորագույն հուշարձան՝ Երուսաղեմի հրեական տաճարի տեղում կառուցված Ալ Հարամ ալ Շարիֆ կամ «Ժայռի Գմբեթ» մզկիթի միջեւ անցկացված զուգահեռը:

Առանձին բաժիններով, նորովի լուսաբանված են Ձվարթնոցի ամբողջ համալիրի վիմագրական արձանագրությունները, ուրարտական սեղագիր կոթողի ներկայությունը եւ հատկապես մինչ այժմ գրեթե անտեսված՝ արեւային ժամացույցը: Վերջինս նորույթ է թվում վաղմիջնադարյան հայկական իրականության մեջ եւ կարող է կապվել Ներսես Գ-ի ձեռնարկած ծիսական, ժամերգական ռեֆորմի հետ:

Առանձնապես հետաքրքիր է հեղինակի մեկնաբանությունը՝ տաճարի քանդակային հարդարանքի վերաբերյալ, որտեղ, ընդունելով հանդերձ արդեն իսկ շրջանառության մեջ դրված տեսակետները, նա փորձ է անում դրանք միահյուսել ընդհանուր գաղափարաբանական հանդերձի ներքո, որում արտահայտված են կառույցի՝ որպես կաթողիկոսանիստ մայր եկեղեցու եւ Աստծո սրբազան տաճարի կարգավիճակը, ինչպես նաեւ՝ հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորչի եկեղեցաշինական գործունեության խորհուրդը:

Ձվարթնոցի կառուցման տարիները (643-660)[3] համընկնում են արաբական առաջին արշավանքների, Սասանյան հարստության վերջաբանի եւ Բյուզան-

դական հզորության սասանման ժամանակաշրջանին, ուստի եկեղեցին կարող է դիտվել որպես զուգահեռաբար ընթացող համաշխարհային հնչեղության մտահղացում. հեղինակի դիտարկմամբ՝ «*յոթերորդ դարի ռազմական թատերաբեմում «միջազգային հարթակ» բարձրացված հուշարձան*»[4]:

Սրան հակառակ՝ վաղմիջնադարյան Հայաստանի տեղական ազնվականական կյանքի եւ ավանդույթների համատեքստում է ուսումնասիրված երրորդ՝ Պտղնու եկեղեցին, որին նվիրված բաժինը կրում է ***Իշխանական սրբավայր. Պտղնու եկեղեցին*** վերնագիրը: Մարանցին ուշադրությունը կենտրոնացրել է առավելաթես հուշարձանի քանդակային հարդարանքի մեկնաբանության վրա՝ փորձելով կապել աստվածաշնչյան եւ որսի տեսարանների, թռչունների, զարդագոտիների եւ սրբազան անոթների պատկերների համաքրիստոնեական նշանակությունը՝ կոնկրետ, պատմական անձանց եւ իրողությունների հետ, որոնք պատկանում են Ամատունիների նախարարական ընտանիքին: Ըստ այդմ՝ պատկերագրական այս համակարգն ընդհանուր մտահղացմամբ նպատակ ուներ հավերժացնել հայկական ազնվականության հիմնական արժեքները. հերոսական քաջությունը, ֆիզիկական ուժը, որսի եւ խնջույքի կարեւորությունը, նախնիների հիշատակը եւ հնագույն տոհմական ծագումը: Գեղեցիկ համեմատություն անելով գրավոր աղբյուրներում հիշատակված՝ Ամատունիների ծնունդաբանության պատումի եւ համիրանական աշխարհում հայտնի «բախտ, քաջություն, փառք»՝ արքայական իշխանության սրբազան եռյակ ատրիբուտների հետ, ինչպես նաեւ դիպուկ նկատելով, որ վաղքրիստոնեական արվեստում որսի եւ խնջույքի տեսարաններն առավելաթես հանդիպում են թաղումնային գործառույթ ունեցող հուշարձաններում՝ հեղինակը եզրակացնում է, որ Պտղնու եկեղեցին կառուցվել է ոչ միայն որպես եպիսկոպոսանիստ կաթողիկե, այլ նաեւ ծառայել է որպես նախնիների հիշատակին նվիրված տոհմական սրբավայր. ավանդույթ, որ կրկին անդրադարձնում է Հայաստանի «սահմանային» դիրքի առանձնահատկությունները, բայց այս անգամ՝ Պարսկական կայսրության քաղաքական եւ մշակութային ծիրում: Հեղինակը քննարկում է նաեւ եկեղեցու կառուցման թվականները՝ ըստ բերված փաստարկների առաջարկելով ավելի շուտ յոթերորդ դարի կեսերը (640-680 թթ. միջեւ), քան սկիզբը, ինչպես ենթադրվում էր մինչ այժմ:

Քրիստինա Մարանցու այս աշխատության այլընտրանքային նորարարությունն ու բովանդակային համաարփակությունն այնքան ծանրակշիռ են, որ տեղ գտած մի քանի վրիպակներն ու անճշտությունները բոլորովին չեն խանգարում գրքի գիտական արժեքի ընկալմանը: Դրանց թվում, թերեւս, կարելի է նշել «քաղաքագյուղ» եւ «տանուտեր» բառերի մեկնաբանությունը (էջ 35 եւ 44), որոնցից առաջինի «պարսպաղատ գյուղ» ճշգրիտ իմաստը թույլ կտար ենթադրել Մրենի եկեղեցու շուրջ բնակավայրի գոյությունը, իսկ երկրորդի՝ «նախարարա-

կան տոհմի ավագ, ղեկավար» լինելու իմաստը գերադասելի է արտաքին միջամտությամբ տիտղոս ստանալու հետ կապված լինելու ենթադրությունից: Նմանապես՝ Բարդուղիմեոս առաքյալի պաշտամունքն ավելի ուշ շրջանում է տարածվել Հայաստանում, քան Թադեոսինը, եւ նրա անունը չի կարող հիշատակված լինել հինգերորդ դարի աղբյուրներում, ինչպես նշում է հեղինակը (էջ 90), իսկ Վրթանես Քերթողը հայտնի է ոչ թե որպես կաթողիկոս (էջ 91), այլ՝ տեղապահ: Դառնալով Ձվարթնոցի տաճարին՝ գուցե առարկելի է այն պնդումը, թե արաբական արշավանքների եւ Ներսեսի բացակայության հետեւանքով 650-ական թվականներին ընդհատվել են եկեղեցու շինարարական աշխատանքները, քանի որ աղբյուրները նշում են կաթողիկոսի տեղապահ Անաստասի գործունեության մասին: Նույնկերպ, ըստ աղբյուրների քննության, Ձվարթնոցի տաճարի կառուցման վայրի ընտրությունը վերաբերում է Տրդատ թագավորի եւ սուրբ Գրիգորի հանդիպմանը՝ վերջինիս Վիրապից ելնելուց հետո դեպի Վաղարշապատ ճանապարհին, այլ ոչ՝ Գրիգորի՝ Կեսարիայում ձեռնադրվելուց հետո (էջ 122), որովհետեւ այդ ժամանակ Տրդատը նրան հանդիպում է Բագավանում[5]: Վրիպակների շարքում արժե հիշատակել Հովհաննես Մանդակունու կաթողիկոսության տարիները, որ նշված են 420-490 (էջ 151), եւ հայերեն որոշ բառերի սխալ տառադարձումը (տե՛ս էջ 42, 61, 151 եւն), որ հետեւանք է ավելի շուտ արեւմտահայերենի արտասանության:

Այսպիսով, խանդավառությամբ ողջունելով Քրիստինա Մարանցու *Արթուն զորություններ. Վաղմիջնադարյան Հայաստանի երեք եկեղեցի* գրքի մուտքը մասնագիտական շրջանակներ, հույս ունենք, հեղինակի հետ, որ «*այն կհավելի մեր գիտելիքները վաղմիջնադարյան հայկական աշխարհի եւ շրջակա ավանդույթների հետ նրա կապի մասին, ինչպես նաեւ կձեւավորի այս ոլորտում այլընտրանքային մոտեցումների հնարավորությունը*»:

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ
Արվեստի պատմ. դոկտոր (Փարիզ)
Մատենադարանի ավագ գիտաշխատող,
ԵԳՊԱ դոցենտ

NAZÉNIE GARIBIAN
PhD in Art History (Paris)
Senior Reseqrcher at Matenadaran
Associate Professor at YSAFA

1. էջ 18:
2. Նույն տեղում:
3. Հեղինակը թերեւս ծանոթ չի եղել Ալեքսան Հակոբյանի «Հայ-բիւզանդական յարաբերութիւնները է դարի կէսերին եւ Զուարթնոցի կառուցման ժամանակը» հոդվածին (Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հտ. XXIV, Եր., 2005, էջ 366-426), որտեղ շինարարական աշխատանքների սկիզբը ենթադրվում է 650 թվականը:
4. էջ 19:
5. Հունական վարքը չի նշում հանդիպման վայրը, սակայն նկարագրում է Գրիգորի «աթոռ բարձրանալը» Աշտիշատում (§ 158):